ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ-ՏԵՍՈՒՉ ՀՄԱՅԱԿ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ը ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ գործառույթները՝

1. ուսումնասիրել եմ ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից իրականացվող վարչական և վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթների հարուցման, լսումների անցկացման, գործի քննության մեթոդական ուղեցույցները,
2. ուսումնասիրել եմ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների ուղեցույցը, ծանոթացել եմ աշխատանքային իրավունքի բնագավառում (բացառությամբ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառի) ռիսկի վրա հիմնված ստուգման թիվ 5.1 ստուգաթերթին,
3. ծանոթացել եմ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի աշխատանքային ներքին կարգապահական կանոններին,
4. ուսումնասիրել եմ աշխատանքային պայմանագրերի կնքման և (կամ) լուծման կարգի պահպանման, աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայությամբ աշխատանքների (անօրինական աշխատանք) դեպքերի հայտնաբերման, օրենքով

ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ, Արաբատյան 26, 0046
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

սահմանված կարգով և ժամկետներում աշխատավարձի հաշվարկման ու վճարման նկատմամբ վերահսկողական աշխատանքներին,

5. ծանոթացել եմ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի գործունեության ոլորտում հանրությունից ստացվող դիմում-բողոքների ընդունման և դրանց հետագա ընթացք տալու դրույթներին, մասնակցել եմ պատասխան գրությունների կազմման աշխատանքներին,

6. մասնակցել եմ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հյուսիսային տարածքային կենտրոնի տեսուչների կազմակերպած իրազեկման սեմինարներին,

7. անմիջական ղեկավարի հանձնարարությամբ իրականացրել եմ գրությունների և այլ փաստաթղթերի նախագծերի կազմման աշխատանքներ:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ

ԳԱՅԱՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքները գնահատում եմ՝

ՊԵՏ-ՏԵՍՈՒՉ ՀՄԱՅԱԿ ԱՅՎԱԶՅԱՆ